

Ճուղուր Երևանցի



ԹԵ ԻՆՉՈՒ...

Տեխաթներ միջատների մասին 1

Կարդա
և
գունավորիր




5



Ճուղուր Երևանցի

ԹԵ ԻՆՉՈՒՄ...


Հեքիաթներ միջատների մասին 1



ԷՆԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ

ԹԵ ԻՆՉՈՒ Է ՍԱՐԴԸ ՍԱՐԴՊՍԱՅՆ ՀՅՈՒՍՈՒՄ

Շատ տարիներ առաջ հեռու հեռավոր քաղաքներից մեկում էի ջութակահար էր ապրում, ով տաղանդավոր երաժիշտ էր, բայց ընտանիք ու ընկերներ չուներ: Նրա միակ ընկերը էդվարդ սարդն էր, որ ապրում էր իր տանը: Ամեն երեկո, երբ երաժիշտը համերգից վերադառնում էր, ընթրում էր ոչ մենակ, այլ սարդի ընկերակցությամբ: Այո՛, այո՛, սիրելի՛ երեխաներ, հենց սարդի, որը նրա համար հաճելի գրուցակից էր...



Միգուցե հիմա դուք վախենում եք սարդերից և չեք էլ պատկերացնում, թե ինչպես կարելի է նրանց հետ ընկեր լինել, այն էլ սեփական բնակարանում:

Բայց սարդ էդվարդը շատ խելացի էր, խոսել գիտեր, անգամ հասկանում էր երաժշտությունից և այդ պատճառով երեկոյան ժամերին հաճույքով ընկերակցում էր ջութակահարին:



- Ինչպէս անցավ այսօրվա համերգը, - ամեն անգամ սարդը, ցածր ձայնով, հարցնում էր ջութակահարին:

- Լավ էր, ամեն ինչ հաջող անցավ,- քաղաքավարի պատասխանում էր երաժիշտը,- միայն թե ջութակիս լարերը արդեն մաշվել են: Ամեն բոպե դրանք կարող են կտրվել և համերգս տապալել: Նոր լարեր պիտի գնեմ, բայց փողս չի հերիքում...



Սարդը սրտնեղում էր այդ պատասխանից, ուզում էր ինչ-որ կերպ օգնել իր ընկերոջը: Բայց ինչպէս: Այս ինքը ընդամենը մի փոքրիկ միջատ էր, այնքան փոքրիկ, որ հագիվ էր նկատվում մարդկանց կողմից ու չէր էլ պատկերացնում, թե ինչպէս կարելի է փող աշխատել երաժիշտին օգնելու համար: Իսկ դա շատ էր մտահոգում սարդին: Չէ որ նա ապրում էր երաժիշտի տանը, սնվում էր նրա ուտելիքի մնացորդներով, քնում էր տաքուկ բնակարանում, սեղանի տակ և ապահով կյանք էր վարում՝ առանց որևէ օգուտ տալու ջութակահարին: Մի տեսակ անհարմար վիճակում էր իրեն զգում և ցանկանում էր անպայման ինչ-որ հարցում օգտակար լինել: Բայց թե ինչպէս, առայժմ ինքն էլ չգիտեր...

Ամեն գիշեր, ընթրիքիքց հետո, սարդը այս մտահոգությամբ քուն էր մտնում ու մտածում իր ընկերոջ ջութակի մաշված լարերի մասին: Եվ ահա, մի օր, գիշերային իր մտորումների մեջ սարդի գլխով մի հիանալի միտք անցավ:

«Իսկ ինչ կլինի, եթե ես ինքս ջութակի լարեր հյուսեմ իմ ընկերոջ համար: Չէ որ կարող եմ իմ բերանի օգնությամբ մանրաթել ստանալ, - մտածեց սարդը, - իսկ այդ մանրաթելերը հյուսելով՝ ջութակի ամուր լարեր գործել»:



Այդպես էլ վարվեց: Ամբողջ գիշեր էդվարդ սարդը աչք չկպցրեց: Մնաց արթուն և իր բերանի հյուսթով երկար մանրաթելեր ստացավ: Այդ մանրաթելերը շատ նուրբ էին: Այնքան նուրբ, որ անգամ մի փոքր հպումից կարող էին վնասվել: Բայց երբ մանրաթելերը իրար էին միացվում, դրանք դառնում էին հաստ ու բարակ լարեր, որոնք շատ ամուր էին և, կարող էին դիմանալ ջութակի աղեղի ուժեղ հպումներին ու չփրթվել:

Արդեն լուսանում էր, երբ էդվարդը իր գործը մոտեցնում էր ավարտին: Մի կողմից իր բերանով մանրաթել էր արտամղում, մյուս կողմից, իր վեց ոտքերը գործի դնելով, դրանք արագորեն հյուսում և լարեր էր ստանում:

Եվ ահա, սարդի հյուսած մանրաթելերից ստացված ջութակի լարերը պատրաստ էին, որոնք էդվարդը տեղափոխեց խոհանոցի սեղանի վրա, որպեսզի նախաճաշին ջութակահարը դրանք նկատեր:

- Սրանք ինչ են, - զարմացավ երաժիշտը՝ առավոտյան մոտենալով սեղանին:


- Իրանք ջութակի լարեր են, սեղանի տակից պատասխանեց սարդը:


- Ջութակի լարեր - զարմացավ երաժիշտը, որտեղից:


- Ես եմ գործել ամբողջ գիշերվա ընթացքում, - ցածրաձայն հավելեց սարդը:

- Ուրեմն դու կարող ես ջութակի լարեր հյուսել, - ապշահար հետաքրքրվեց երաժիշտը:

- Ախր դու ընդամենը մի փոքրիկ սարդ ես: Մի հասակիդ ու չափսերիդ նայիր ու քո արած գործին: Այդ ինչպե՞ս կարողացար մի գիշերվա







ընթացքում այսպիսի երկարությամբ և հաստությամբ ջութակի լարեր գործել,- զարմացավ երաժիշտը:

- Դրանից էլ հեշտ բան,- պարծեցավ Էդվարդ սարդը: - Դուք՝ մարդիկդ, մոռանում եք, որ սարդերը կարող են իրենց բերանի հյուլով մանրաթել սարքել, որքան որ ուզենան: Իսկ դուք չեք կարող դա անել: Հետո էլ՝ մի մոռացեք, որ մենք՝ սարդերս, ունենք արագաշարժ ձեռքեր և ոտքեր, որոնք գործի դնելով կարող ենք մանրաթելերից գործվածքներ պատրաստել, հաստ ու բարակ թելեր հյուսել: Դե, կարծես շատախոսեցինք, արի փորձենք, թե իմ գործած այս լարերը ինչպես կաշխատեն



ջութակի վրա:

Ջութակահարը վերցրեց էդվարդ սարդի լարերը, դրեց ջութակի վրա և սկսեց նվագել: Նա շատ զարմացավ, երբ հասկացավ, որ սարդի հյուսած լարերը հնչեղ երանգներ ունեին և գեղեցիկ երաժշտություն էին ապահովում:

- Չգիտեմ, թե քեզ ինչպես երախտապարտ լինեմ,- նվագն ավարտելուց հետո հուզված խոսեց ջութակահարը: - Դու այնքան գեղեցիկ նվեր մատուցեցիր ինձ և փրկեցիր իմ համերգները ձախողումից: Չէ՞ որ հիմա արդեն կարող եմ հանգիստ սրտով բեմ դուրս գալ ու չվախենալ, որ ջութակիս մաշված լարերը կփրթվեն:

- Ինձ ոչինչ էլ հարկավոր չէ: Ես քո ընկերն եմ, ապահով ապրում եմ քո տանը և սնվում քո հաշվին: Միթե սա բավական չէ:

- Բայց միննույն է: Դու ինձ փրկեցիր: Ես չէի կարող գնել ջութակի նոր լարեր, որովհետև անհաժեշտ փող չունեմ, և դու այդ լավ գիտես, - անոթխած պատասխանեց երաժիշտը:

- Դե լավ, որ այդպես է, ես մի փոքրիկ խնդրանք ունեմ, - խոսեց սարդը:

- Ինչ է ուզածդ, - հետաքրքրվեց երաժիշտը:

- Տար ինձ այսօր քեզ հետ համերգիդ: Ես երբեք չեմ եղել դահլիճում ու շատ կուզենայի լինել հանդիսատեսի դերում:

- Դրանից էլ հեշտ բան: Կմտնես իմ ջութակի պատյանի մեջ, և ես քեզ այս երեկո կտանեմ համերգային դահլիճ: Համերգից առաջ ես պատյանից կվերցնեմ ջութակս, որ նվագեմ, իսկ դու կմնաս այնտեղ և կլինես իմ հանդիսատեսը: Այնուհետև, համերգի ավարտից հետո, երկուսով կվերադառնանք տուն: Դե ինչ, համաձայն ես, - հարցրեց ջութակահարը:

-Դե, իհարկե, համաձայն եմ, - խանդավառված արձագանքեց էդվարդ սարդը:

Այդպես էլ արեցին: Սարդը մտավ ջութակի պատյանի մեջ, և



նրանք երեկոյան ուղևորվեցին համերգային դահլիճ: Էդվարդը ապշել էր տեսարանից: Ամենուր պայծառ լույսեր էին: Նա երբեք չէր տեսել մարդկանց այդքան մեծ բազմություն՝ հավաքված դահլիճում՝ երաժշտություն ունկնդրելու:

Համերգը սկսվեց: Ջութակահարը բեմ դուրս եկավ և սկսեց նվագել: Ջութակի աղեղը արագորեն և սահուն հպվում էր լարերին, այն լարերին, որ հյուսել էր սարդը: Ամեն ինչ հիասքանչ էր: Ջութակի երաժշտությունը սավառնում էր դահլիճով, մտնում հանդիսատեսի հոգին, ջերմացնում մարդկանց սրտերը:

Հիմա արդեն, ջութակի նոր լարերով երաժիշտը ավելի համարձակ էր նվագում, ինքնամոռաց մի ձեռքով շարժում էր մատները, իսկ մյուս ձեռքով՝ գործիքի աղեղը: Շուրջբոլորը հնչում էր ջութակի զրնգուն մեղեդին, և սարդը հիանում էր գեղեցիկ մեղեդիներից կախարդված հանդիսատեսի դեմքերով:

Եվ, ահա, համերգը վերջացավ: Հանդիսատեսը ոտնկաջ ծափահարում էր և կրկնություն պահանջում: Ու հենց այստեղ էր, որ սարդի տրամադրությունն ընկավ: «Ինչպե՞ս չեն նկատում, որ այս հաջողության պատճառը ես եմ: Չէ՞ որ ջութակի մեղեդիները իմ հյուսած լարերից էին գալիս», – սրտնեղեց սարդը ու չզիտես ինչու որոշեց, որ իրեն էլ պետք է ծափահարեն և ուշադրության արժանացնեն: Ու դուրս գալով ջութակի պատյանից, կամացուկ բարձրացավ գործիքի վրա, այնպես, որ ջութակահարը չնկատեր:

– Սա արդար չէ, ինձ էլ ծափահարեք, այդ ես եմ հյուսել ջութակի լարերը, որոնց հնչյունները դուք հիմա վայելում եք, – նայելով հանդիսատեսին՝ գոռում էր սարդը: Բայց նրա ձայնը այնքան ցածր էր, իսկ չափերը այնքան փոքր, որ հանդիսատեսը չէր էլ նկատում ջութակի վրա բարձրացած սարդին:

Եվ ահա, վերջապես երաժիշտը նորից իր ձեռքը վերցրեց ջութակը ու սկսեց նվագել: Բայց, այ քեզ դժբախտություն: Նա սկսեց, ի զարմանս բոլորի, վատ նվագել, անգամ սխալներով: Իսկ այդ ամենի մեղավորը սարդն էր, որը գնում-գալիս էր



ջութակի լարերի վրայով և թույլ
չէր տալիս երաժիշտին ազատորեն
շարժելու մատները և սահուն նվագելու:
Իսկ ջութակահարը վախենում էր իր
մատներով ձգմել ընկերոջը և ցավ
պատճառել նրան:


Ի վերջո, ջութակահարը մի կերպ
նվագեց, և համերգն ավարտվեց:
Դժգոհ էր հանդիսատեսը, քանի
որ վերջին գործը շատ վատ
կատարվեց, բայց ով իմանար,
որ դրա մեղավորը ոչ թե
երաժիշտն էր, այլ նրա ընկեր
սարդը: Զայրացել էր նաև
ջութակահարը, որի ընկերը
ձախողեց իր համերգը:

Համերգից հետո ետնա-
բեմում երաժիշտը խիստ
տոնով դիմեց սարդին.

- Դու այլևս չես կա-
րող իմ տանը ապրել,
ես քո ընկերը չեմ: Չես
պատկերացնում, թե ինչ
վատ բան արեցիր: Դու
խայտառակեցիր ինձ:

- Խնդրում եմ, ների՛ր ինձ: Դա այլևս չի կրկնվի: Ես չեմ կարող
ապրել առանց քեզ, - աղերսեց սարդը:

- Լավ, ես քեզ տուն կտանեմ, դու կապրես իմ բնակարանում,
բայց այլևս չես քնի խոհանոցի սեղանի տակ ու չես սնվի իմ
կերակուրի մնացորդներով: Եվ ես չեմ էլ փորձի անգամ գրուցել
քեզ հետ ընթրիքի ժամերին:



Այդպես էլ եղավ: Էդվարդ սարդը շարունակեց ապրել երաժիշտի տանը: Բայց նա դարձավ լռակյաց և փորձեց միշտ լինել աննկատ: Սարդոստայն հյուսեց սենյակի բարձր անկյուններից մեկում և գիշերները քնում էր այնտեղ, առանց զրույցի բռնվելու երաժիշտի հետ:


Եվ երևի դուք էլ նկատած կլինեք, որ բոլոր սարդերը մեր տներում հենց այդպես էլ ապրում են: Առաստաղի անկյուններում սարդոստայն են հյուսում, փորձում են անձայն շարժվել և մեզանից աննկատ մնալ: Բայց երբ բարձր երաժշտություն է հնչում, նրանք մի տեսակ աշխուժանում են և սարդոստայնով վեր ու վար անում:

Բոլորը կարծում են, թե երաժշտության բարձր հնչյունները տատանում են նուրբ սարդոստայնը, և սարդերը ենթադրելով, թե այնտեղ փոքրիկ միջատ է գերի ընկել, վեր ու վար անելով՝ շտապում են նրան համտեսել: Բայց մենք դրան չենք հավատում: Հո մենք էլ, սիրելի երեխաներ, արդեն գիտենք երաժշտասեր Էդվարդ սարդի պատմությունը և լավ ենք հասկանում, որ սարդերը երբեք չեն կարող անտարբեր լինել երաժշտության նկատմամբ և այն լսելիս, վեր ու վար են անում՝ ուրախացած ջութակի հնչյուններից:

ԹԵ ԻՆՉՈՒ ՄՐՋՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՏՆԻ ՏԱԿՆ ԱՆՑԱՆ


Կար մի ժամանակ, երբ մրջյուններն ապրում էին ոչ թե հողի տակ, այլ գետնի վրա: Դուք երևի, սիրելի երեխաներ, նկատած կլինեք, որ մրջյունները տաք և արևոտ օրերին վազվզում են հողի վրա, փորձում են իրենցից մի քանի անգամ մեծ ու ծանր առարկաներ քաշ տալ և տանել ու մտցնել հողի տակ գտնվող իրենց բնակարանները: Այո՛, այո՛, մրջյունների բնակարանները հողի տակ են գտնվում և նույնիսկ ունեն մի քանի հարկ, որը մենք չենք տեսնում:

Նրանք էլ մեզ պես իրենց բնակարաններում ստեղծել են խոհանոց, ճաշասենյակ, ննջասենյակներ և այլն: Դուք երևի կհարցնեք, թե այդ ինչու և ինչպես են մրջյուններն իրենց ընտանիքներով ապրում հողի տակ, առանց դուռ ու լուսամուտի, առանց լույսի: Հիմա ես մի հեքիաթ կպատմեմ, և կստանաք այդ հարցերի պատասխանը:



Ճիշտ է, մրջյունները միշտ էլ շատ անգամ փոքր են եղել մարդկանցից, բայց դա նրանց երբևէ չի խանգարել ընդօրինակելու մարդուն: Այդ մենք ենք, որ հաճախ չենք էլ նկատում այդ փոքրիկ և արագաշարժ միջատներին և երբեմն նույնիսկ քայլում ենք նրանց վրայով: Բայց մեկ է, նրանք մեզնից չեն նեղանում և մինչ օրս էլ ուշի-ուշով հետևում են, թե մարդիկ ինչ են անում և, որպես խելացի ու աշխատասեր միջատներ, փորձում իրենք էլ նույնն անել:

Ա՛յ, օրինակ, մարդիկ դեռ վաղ ժամանակներից, ապրելով համայնքով, բնակարաններ էին կառուցում, պաշտպանվում էին քամուց և անձրևից, իրենց ամենօրյա ու քրտնաջան



աշխատանքով ձմեռվա համար սննդի պաշար էին կուտակում և ապահով կյանք վարում: Նույն կերպ վարվում էին մրջյունները: Հագարներով միավորվելով ու համայնք կազմելով, օր ու գիշեր աշխատելով, հողի վրա կառուցում էին իրենց բույնը, նրանում կուտակում սննդի ձմեռային պաշարներ, խմբերով գնում էին աշխատանքի, ինչպես մարդիկ, և վերադառնում մրջնանոց և այն էլ՝ ոչ ձեռնունայն՝ հացի փշրանքներով, հյութալի տերևի կտորներով, ցորենի հատիկներով...

Բայց արի ու տես, որ մրջյունների կյանքը բնավ անհոգ չէր անցնում: Նրանք ունեին թշնամիներ, որոնցից ամենա-սարսափելին մրջնակերն էր: Որ ճիշտն ասես, հիմա էլ են

մրջնակերներն այդ խեղճ միջատների թշնամին: Այդ ազահ կենդանիները շատ են սիրում մրջյուններին համտեսել և դրանցով սնվել:

Դեռ հին ժամանակներից մրջնակերները հարձակվում էին մրջյունների սարքած բների վրա, քանդ ու քարափ անում ամեն ինչ, իրենց երկար ու կպչուն լեզուներով հավաքում ու կուլ էին տալիս այդ խեղճ միջատներին: Դե, պարզ է, որ այսպես երկար շարունակել անհնար էր, ու մի օր էլ մրջյունների համբերության բաժակը լցվեց: Նրանք որոշեցին հավաքվել ու ժողով անել, որպեսզի մի ճար գտնեն ազատվելու այդ ազահ մրջնակերներից:

- Չէ, այսպես երկար շարունակել չի կարելի,- սկսեց ավագ մրջյունը: - Ամիսներով չարչարվելով հողի վրա բնակարաններ են կառուցում, հա-





գարավոր ձագեր ունենում, շենացնում ենք մեր համայնքը, իսկ մրջնակերը գալիս ու մի վարկյանում ավերում է ամեն ինչ: Էլ չեմ ասում, թե մեզանից քանիքանիսն են գոհ գնում այդ անկուշտ գազանիկին:

– Այո՛, այո՛, դուք շատ արդարացի եք, – աղմկելով պատասխանեցին կրտսեր մրջյունները: – Դուք տեսել եք, թե ինչպիսի գարհուրելի երախ ունի այդ մրջնակերը: Դունչը երկար է, ասես փոշեկուլի խողովակ լինի, որը միանգամից հարյուրավոր

մրջյուններ է կուլ տալիս: Դրան օգնում է նրա շատ երկար ու կաշտն լեզուն, որը մեկ բռպետում տասնյակ անգամ հետ ու առաջ է շարժվում և իր վրա է հավաքում մեր խեղճ ընկերներին, որ հետո նրանց իր անատան երախով կուլ տա: Ուղղակի սարսափելի է, երբ հիշում ենք այդ ամենը: Հիմա ի՞նչ պիտի անենք: Այնքան անձար ենք դարձել, որ ամոթից ուզում ենք գետինը մտնել...

– Գետինը մտնել..., գետինը մտնել..., վատ միտք չէ, – հանկարծ ուրախ ձայնով խոսեց մի խելացի մրջյուն:

– Այդ ի՞նչ ունենք ուրախանալու, որ հիմա դեմքդ պայծառացրիր և ուրախ ձայնով մեզ արձագանքեցիր, – գայրացավ ավագ մրջյունը:

- Ինձ կներեք իմ ուրախ ելույթի համար, բայց դա իր պատճառն ունի: Մտքունս հիմա մի հետաքրքիր ու մեզ համար փրկարար ծրագիր ծագեց: Կուզե՞ք առաջարկեմ, – խոսեց խելացի մրջյունը:

- Հապա, հապա, – հետաքրքրվեցին բոլորը:


- Հենց նոր մեկն ասաց, չե՞, որ մեր անձարության պատճառով կարծես ուզում ենք ամոթից գետինը մտնել: Այո, կարծում եմ, որ անպայման պետք է գետինը մտնենք, բայց ոչ թե ամոթով, այլ ապահով կյանքի ձգտելով:

- Այդ ինչպե՞ս: Կարող ես մի քիչ պարզ խոսել, որ բան հասկանանք,– հետաքրքրվեց ավագ մրջյունը:

- Ես առաջարկում եմ մեր բնակարանները կառուցել ոչ թե գետնի վրա, ինչպես մարդիկ են անում, այլ գետնի տակ: Այս դեպքում արդեն մրջնակերները մեզ դժվար կնկատեն և քիչ վնաս կտան: Չե՞ որ մեր բնակարանները գետնի տակ տեսանելի չեն լինի:

- Դա պարզապես անհնար է, ինչպե՞ս մենք կարող են օրերով ապրել գետնի տակ, առանց արևի լույսի, սննդի, – ահազանգեցին բոլոր միաբերան:

- Հիմա ես ավելի մանրամասն կբացատրեմ մեր անելիքը, – հանգիստ տոնով պատասխանեց խելացի մրջյունը: – Մեր այս մեծ ընտանիքը նախ կբաժանենք խմբերի, և յուրաքանչյուրը կունենա իր գործը, և մենք հեշտ կապրենք:







- Այդ ինչ խմբեր են լինելու, - փորձեց պարզել ավագ մրջյունը:
- Ասեմ, - պատասխանեց խելացին: - Մեզնից ամենաուժեղները կդառնան զինվորներ, ինչպես մարդկանց մոտ է: Իսկ մնացածներս կլինենք աշխատավորներ: Դե, իհարկե, բոլորս միահամուռ կպահպանենք և կկերակրենք մեր մայր մրջյունին,

որը շարունակ մրջնի ձագերի ձվեր կածի և կգորացնի մեր համայնքը:

- Իսկ ի՞նչ պիտի անեն զինվորները, մեկ է, նրանք որքան էլ շատ լինեն, չեն կարող մեզ պահպանել այդ գիշատիչ մրջնակերից:

- Այո, եթե նույնիսկ մեր բոլոր զինվորները հավաքվեն, բանակ կազմեն, նրանք չեն կարող հաղթել մրջնակերին, որն իր չափերով մեզնից շատ ու շատ մեծ է և ուժեղ: Բայց, մյուս կողմից, զինվորները պահակություն կանեն մեր հողաշեն գետնափոր բնակարանների մուտքերի մոտ, որ թշնամի միջատները չմտնեն մեր սննդի պահեստները և գողություն չանեն: Բացի այդ, մտածել





էք արդյոք, որ եթէ անձրև գա, ինչպէս պիտի պաշտպանենք մեր մրջնանոցը ջրհեղեղից: Չէ՞ որ անձրևը ներծծվելով հողի մեջ, ջրի տակը կառնի մեր ամբողջ բնակարանը:

- Այ դա խնդիր է, որի մասին իրոք պետք է մտածել,- միաբերան բացականչեցին ժողովին մասնակից մրջյունները:

- Իսկ ես արդէն մտածել եմ, - խանդավառված շարունակեց խելացի մրջյունը: - Մեր գինվորները, որոնք ամենից խոշորն են, պարզապես անձրևների ժամանակ իրենց հուժկու մարմիններով պատ կկազմեն և չեն թույլ տա, որ ջուրը դռներից ներհոսի մրջնանոց:

- Հոյակապ միտք է, - ոգևորվեց ավագ մրջյունը: - Ուրեմն կարելի է մեր բույսը հողի վրայից տեղափոխել հողի տակ և այնտեղ նոր բնակարան կառուցել: Բայց այս դեպքում ինչպէս լուծենք սնունդը պաշարելու հարցը: Այ, հողի վրա գտնվող


մեր բնակարաններում մենք հեշտ ենք սնունդ կուտակում, իսկ հողի տակ պահեստները լինելու են բավականին խորը: Չեմ պատկերացնում, թե ինչպես են մեր աշխատավոր մրջյունները չարչարվելու և աշխատելու, որ առանց ուժասպառ լինելու այնտեղ սննդի ձմեռային անհրաժեշտ պաշար կուտակեն:

- Ես դրա մասին էլ եմ մտածել, - խոսեց հնարամիտ մրջյունը: - Եկեք օրինակ վերցնենք մարդկանցից: Նրանք ամեն օր բեռնատարներով ծանր բեռներ են տեղափոխում, որը հարյուրապատիկ անգամ ավելի ուժ է պահանջում, քան իրենք ունեն: Նույն կերպ օգտագործում են նաև վերամբարձ կռունկներ...

- Հա՛, ի՛նչ կա որ, մենք՝ մրջյուններս, նույնպես կարող ենք մեր քաշը հարյուրապատիկ անգամ գերազանցող բեռ շալակել: Ուրեմն կարող ենք նաև լուծել հողի տակ մեր սննդի պաշարման հարցը, - վրա բերեց համարձակ մրջյուններից մեկը:

- Իսկ ես ի՛նչ պետք է անեմ,
- ըմբոստացավ մայր մրջյունը:
- Մինչև հիմա առողջ-փառաբապրում էի իմ բնակարանում: Ճիշտ է, երբեք դուրս չէի գալիս այնտեղից ու շարունակ իմ պատուհանից նայում էի գեղեցիկ արևին ու վայելում բնությունը: Հողի տակ դա չեմ կարող անել:

- Այո՛, քեզ համար այս առումով վատ կլինի: Երբ մեր մրջնանոցը տեղափոխենք հողի տակ, դու նորից կշարունակես ձագուկներ ունենալ, բայց, ավաղ, արդեն արևի երես չես տեսնի: Բայց



փոխարենը մենք բոլորս կպարտավորվենք ամեն օր դրսից
համեղ կերակուր բերել ու քեզ կերակրել, - արդարացավ
խելացի մրջյունը:



Այդպես էլ արեցին: Մրջունները տեղափոխեցին իրենց մրջնանոցները հողի տակ և մինչև այսօր այդտեղ են բնակվում: Ասեմ նաև, որ մայր մրջունն էլ դրանից գոհ մնաց: Ճիշտ է, իր բնակարանը հիմա արդեն պատուհան չունի և այնտեղ արևի լույս չի ընկնում, բայց փոխարենը զինվոր մեղունները պահպանում են իր բնակարանի դռները, իսկ աշխատավոր մրջունները ամեն օր նրան համեղ ուտելիք են հյուրասիրում:

Այս ամենից դժգոհ մնացին միայն մրջնակերները, որոնք սկսեցին դժվարությամբ գտնել հողի տակ թաքնված մրջնանոցները: Բայց մեկ է, նրանք մինչև այսօր ձեռք չեն քաշում մրջուններից: Երկարացրել են իրենց առջևի թաթերի եղունգները և դրանցով անընդհատ փորում են հողը, որպեսզի նոր մրջնանոցներ գտնեն:

Իսկ մրջունները դրան ուշադրություն չեն էլ դարձնում: Երևի դուք նկատած կլինեք, որ նրանք ամեն օր ժրաջան աշխատում են և իրենց ուսերին դրած, հպարտության զգացումով, սնունդ են տեղափոխում գետնի խորքում սարքած բազմահարկ մրջնանոց:

Իսկ գիտե՞ք, թե ինչու են մրջունները հպարտ: Հիմա պատասխանեմ: Նրանք էլ հո լավ գիտեն, որ մեր մայրիկներն իրենց մրջնանոցի ձևով մեզ համար համեղ քաղցրավենիք են պատրաստում, որը հենց այդպես էլ կոչվում է՝ «մրջնի բույն»: Եթե մինչև հիմա չեք համոտեսել այդ համեղ քաղցրավենիքը, խնդրեք մայրիկներին, թող պատրաստեն ձեզ համար: Իսկ դուք, իմ սիրելի երեխաներ, հավաքվեք թեյի սեղանի շուրջ, վայելեք «մրջնի բույնը» և միմյանց պատմեք, թե ինչու մրջնանոցը գետնի տակն անցավ:



ԹԵ ԻՆՉՈՒ ՄԵՂՈՒՆԵՐԸ ՄՏԱՆ ՓԵԹԸԿՆԵՐ

Երբ ձմեռն ավարտվում է, գարնանից սկսած մինչև ուշ աշուն մեղվապահները փեթակներով են զբաղվում, հոգ են տանում մեղուների պարսերի անվտանգության համար և այդ չարաձճի ու խայթող միջատների նկատմամբ ուշադիր վերաբերմունք ունեն: Բոլորին թվում է, թե մարդիկ այդ փայտե փեթակ-տնակներում մեղուներ են պահում, որ աշնանը մեղր հավաքեն: Իհարկե, դա այդպես է: Բայց ես նաև մեկ ուրիշ պատմություն գիտեմ մարդկանց և մեղուների բարեկամության մասին:


Կար մի ժամանակ, երբ մարդիկ չէին սիրում մեղուներին: Ախր այդ միջատները ոչ միայն գեղեցիկ էին, այլև՝ խայթող: Հերիք էր, որ անտառում նրանց ձեռքդ առնեիր, իսկույն իրենց պոչի ծայրով ցավոտ կխայթեին: Եվ քանի որ հիմա էլ է այդպես, բոլոր երեխաները զգուշանում են մեղուներից: Բայց արի ու տես, որ մեղվապահները ոչ միայն չեն վախենում այդ աշխատասեր միջատներից, այլև բարեկամություն են անում նրանց հետ: Եվ ահա թե ինչու:

Ի սկզբանե մեղուներն ապրում էին անտառում: Նրանց կոչում էին վայրի մեղուներ, որովհետև այդ միջատների վարքն էլ վայրի էր: Ուր պատահեր, մեղվաբուն էին սարքում՝ մեկ ծառերի փչակներում, մեկ՝ չորացած ձյուղերի վրա... Դա էլ

հերիք չէր, անտառային մեղուներն այնքան էլ համերաշխ չէին և ամեն օր վիճում էին միմյանց հետ՝ մեղվաբնում հարմար տեղավորվելու համար: Բանն այն էր, որ վայրի այդ միջատներն իրենց մեղվաբները հարմարավետ չէին սարքում: Տարածքը նեղ էր, սենյակները՝ փոքր, և ստացվում էր այնպես, որ շատ մեղուներ, հոգնած աշխատանքից վերադառնալով, փեթակում անգամ քնելու տեղ չէին գտնում:

– Ես ինչո՞ւ պիտի օրական 8 կիլոմետր թռչեմ, հետո հոգնած վերադառնամ ու մի հարմարավետ անկյուն չգտնեմ մեղվաբնում, որ մի քիչ հանգստանամ, – բողոքում էին աշխատասեր և ամրակազմ մեղուները:





- Իսկ ձեզ ղվ է
խնդրում այդքան
հեռանալ: Այ, մենք
ընդամենը
երկու կիլոմետր
ենք թռչում ու
կարողանում
ներկտար
հավաքել, -
պատասխանում էին
մյուսները:

- Չէ՛ մի, տեսնում
ենք ձեր հավաքած
ներկտարը, - հակադար-
ձում էին ամրակազմնե-
րը: - Այնքան քիչ եք բերում,
որ դրանից մի կարգին մեղր

էլ դուրս չի գալիս:

- Որքան կարողանում ենք, այնքան էլ հավաքում ենք,
-արդարանում էին մյուս մեղուները: - Դրա համար էլ հեռու
չենք թռչում, ձեզ պես չենք հոգնում ու, շուտ վերադառնալով
մեղվաբույն, այնտեղ ազատ տեղեր ենք գտնում և հանգստանում:

- Կհանգստանա՞ք ձմռանը՝ փեթակում սնվելով մեր սարքած
մեղրով: Իսկ հիմա դեռ կես կիլոգրամ մեղր էլ չենք հավաքել:
Ի՞նչ հանգստանալու ժամանակն է: Պետք է գործի անցնել և
քրտնաջան աշխատելով՝ ծաղիկներից ներկտար հավաքել, -
դժգոհում էին պնդակազմ մեղուները:

- Հեշտ է ասելը՝ քրտնաջան աշխատել, - հեզնում էին ծույլ
մեղուները: Որպեսզի մեկ կիլոգրամ մեղր հավաքվի, մեղուն
պետք է մոտ հինգ հազար անգամ դուրս գա ներկտար հավաքելու՝
այցելելով ավելի քան տասը հազար ծաղիկների: Ուրեմն պետք


է թռչենք սնոտ 300 հազար կիլոմետր տարածություն: Ավելի լավ է ձմռանը կիսատված մնանք, քան այդքան չարչարվենք:


- Այս դուք ունեք հոտառության ուժեղ զգացողություն և ընդունակ եք նեկտարի հոտն առնել նույնիսկ մեկ կիլոմետր հեռավորությունից: Ինչու՞ դա չեք անում և ծաղիկների նոր վայրեր փնտրում, այ՛ն ծուլիկներ,- շարունակում էին բողոքել ամրակազմ մեղուները:

- Մենք դա փորձել ենք,- սկսեց արդարանալ ծուլ մեղուներից մեկը: - Ա՛յ, անցյալ անգամ ես փորձեցի միանգամից փեթակ բերել սնոտ 50 միլիգրամ նեկտար: Բայց հավաքածս նեկտարի որոշ մասը կերա հենց ճանապարհին, որպեսզի թռիչքի ժամանակ ուժ ունենայի մնացածը տեղ հասցնելու: Ու ստացվում է այնպես, որ իմաստ չենք գտնում հեռու թռչելու: Տարածությունը, ուր պետք է թռչենք և նոր ծաղիկներ գտնենք, եթե շատ մեծ է, ապա հետդարձին օգտագործում ենք մեր հավաքած նեկտարի 60-70%-ը:

- Չէ, դուք դրանով միայն պատճառ եք փնտրում, որ շատ չաշխատեք և դաշտերից շուտ վերադառնալով՝ ընդամենը փեթակում մեր փոխարեն հարմար տեղեր գբաղեցնեք,- չհամաձայնեցին ամրակազմ մեղուները:

- Է՛, դուք էլ մեզ պես հեռու մի թռչեք, քիչ նեկտար հավաքեք ու շուտ վերադարձե՛ք: Դուք էլ մեղավարձում կունենաք հարմարավետ տեղեր:





- Այդ դեպքում բոլորս ձմռանը սովից կսասկենք, քանի որ ծաղիկներից հավաքած քիչ նեկտարով չենք ունենա բավականաչափ մեղրի պաշար: Ու հիմա, փոխանակ մեզ հետ հարգալից լինեք, որ ձեր փոխարեն էլ ենք աշխատում և մեղր սարքում, հակառակն եք անում, դիտավորյալ շուտ եք

աշխատանքից վերադառնում ու հարմարավետ տեղավորվում այս նեղ մեղվաբնում, որ մեզ վիրավորեք: Չէ, այսպես չի լինի: Ավելի լավ է, թողնենք հեռանանք:

- Պահ, հեռանում եք, հեռացեք, ձեր գործն է, - փոքր-ինչ ուրախությամբ արձագանքեցին ծույլ մեղուները: - Ավելի լավ, մեզ դրանով լավություն կանեք, մեր տեղը կմեծանա այս փոքր մեղվաբնում:

Ամրակազմ մեղուները ի վերջո հասկացան, որ իրենց քրտնաջան աշխատանքը չի գնահատվում: Պարսեր կազմեցին ու նեղացած հեռացան անտառից: Բայց թե ո՞ր պիտի գնային ու նոր մեղվաբույն շինեին, դեռ իրենք էլ չգիտեին:

Թռիչքի պահին հանկարծ մի մեղու համարձակվեց խոսել:

- Եկեք գնանք մարդկանց մոտ, կարծում եմ, այդպես բոլորիս հարմար կլինի:

- Ինչպե՞ս թե հարմար կլինի, - զարմացան մյուսները: - Ախր

մենք վայրի մեղուներ ենք, սովոր ենք ապրել անտառներում, ինչ պիտի անենք մարդկանց մոտ:


- Մարդիկ այգիներ ունեն: Այնտեղ ծառեր են աճում, որոնք գարնանն ունեն հյութալի նեկտարով լի ծաղիկներ: Մենք կարող ենք այդ ծառերի ծաղկաթերթերից շատ նեկտար հավաքել և ձմեռվա համար բավարար քանակով մեղր սարքել:


- Հա, լավ ես ասում: Բայց մտածել ես արդյոք, թե որտեղ պիտի ապրենք – հետաքրքրվեցին մյուս մեղուները:

- Կարող ենք գնալ և տեղավորվել մարդկանց տանիքներում, այնտեղ էլ մեղվաբույն կսարքենք, – բացատրեց հնարամիտ մեղուն:


Այդպես էլ վարվեցին:

Անտառը լքած մեղուները հասան մարդկանց մոտ, մեղվաբույն սարքեցին գյուղի տան կտուրներից մեկի տակ ու սկսեցին այնտեղ մեղր սարքել: Իսկ գյուղացիները, որոնք մինչ այդ գաղափար չունեին, թե ինչ է մեղրը, և ինչ համով ուտեստ է այն, համտեսելով հասկացան, որ կարելի է վայրի մեղուներին ընտելացնել:





Նրանք հոգատար եղան այդ գեղեցիկ միջատների հանդեպ: Հենց իրենց այգիներում սկսեցին մեղուների համար կացարաններ սարքել, որոնք շատ էին տարբերվում անտառի մեղվարներից: Փայտից էին, ընդարձակ սենյակներով, ամուր տանիքներով: Դե, պարզ էր, որ մեղուները հաճույքով մտան մարդկանց սարքած փեթակները և սկսեցին այնտեղ երջանիկ ապրել:




Նեկտար հավաքելով
գբաղվում էր փեթակի մե-
ղուների մոտ կեսը: Մնա-
ցածները գբաղվում էին
նոր բջիջներ կառուցելով,
սերնդին հետևելով, մեղր
արտադրելով և այլ օգտա-
կար գործերով: Նրանք այն-
քան ուժեղացան, որ դար-
ձան մոլորակի ամենաուժեղ
միջատներից մեկը: Սկսեցին
բարձրացնել իրենց քաշից
երկու անգամ ծանր բեռ և
հասան նրան, որ կարողացան
քարշ տալ իրենց քաշից մոտ
քսան անգամ ծանր իր: Դե,
պարզ էր, որ մարդկանց
սարքած փեթակներում ապ-

րող մեղուները դրանից
հետո պետք է առավել
առնական դառնային:
Եվ հենց սա էլ դարձավ
պատճառ, որ վայրի մեղու-
ները ընտանի մեղուներից
առաջին հերթին սկսեցին
տարբերվել իրենց փոքր
չափերով:


Հիմա դուք, սիրելի
երեխաներ, կհարցնեք,
թե ինչո՞ւ մարդիկ որոշեցին մեղու





պահել: Չէ՛ որ դա մի քիչ վտանգավոր է, քանի որ մեղուները ցավոտ խայթել գիտեն: Բայց միևնույն է, մարդկանց դա չանհանգստացրեց, քանի որ նրանք զգուշավոր են և գիտեն ինչպես վարվել այդ միջատների հետ և հոգատար լինել նրանց նկատմամբ:

Պարզ է, որ մեղվի փեթակներից մենք մեղր ենք քանում, բայց ոչ ամբողջությամբ, որպեսզի այդ աշխատասեր միջատներին ձմռանը սնվելու որոշակի պաշար թողնենք: Բացի այդ, մարդիկ տարվա ընթացքում դաշտից դաշտ են տեղափոխում մեղվի փեթակները, որպեսզի մեղուները նոր ծաղիկների հանդիպեն և շատ չչարչարվեն: Երբ մեղուն թռչում է թեթև, նա ընդունակ է զարգացնել մինչև 65 կմ/ժ արագություն: Իսկ երբ նա բեռնված է, ապա թռչում է 15-30 կմ/ժ արագությամբ՝ կախված իր կրած բեռի ծանրությունից: Ախր այդ դեպքում մեղուն թափահարում է



թւերը անհավանական հաճախականությամբ՝ մոտ 450 շարժում մեկ վայրկյանում: Դե՛, մարդիկ էլ չեն ուզում, որ իրենց մեղու բարեկամներն այդքան շատ չարչարվեն և նրանց հարմարավետ փեթակներն անընդհատ տեղափոխում են նոր ծաղկաշատ վայրեր:

Ահա թե ինչու վայրի մեղուները մտան փեթակներ և այնտեղ իրենց ավելի հարմարավետ զգացին՝ ընտելանալով մարդկանց խնամքին: Իսկ անտառում ապրող մյուս մեղուներն այդպես էլ մնացին վայրի և ափսոսացին, որ չհետևեցին իրենց ամրակազմ ընկերներին ու անգամ նեղացրին նրանց: Ասում են, որ երբեմն ընտանի մեղուները հյուր են գնում անտառում բնակվող ընկերներին և որպես նվեր՝ հարմարավետ փեթակից մեղր են վերցնում իրենց հետ:

